ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 1997 թվականի ֆինանսական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը,

ելնելով Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև առկա բարեկամական հարաբերություններից,

կամենալով ամրապնդել և խորացնել առկա բարեկամական հարաբերությունները գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով,

գիտակցելով, որ այդ հարաբերությունների պահպանումը սույն Համաձայնագրի հիմքն է կազմում,

մտադրություն ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետության սոցիալական և տնտեսական զարգացմանը,

վկայակոչելով 1997 թ. նոյեմբերի 5-ին Բոննում կայացած ֆինանսական և տեխնիկական համագործակցությանը նվիրված բանակցությունները,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

1) Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը հնարավորություն է ընձեռում Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ վարկառուների՝ Մայնի Ֆրանկֆուրտի Վերականգնման վարկերի բանկից (KfW) նախագծի իրականացման համար, Զարգացման միջազգային կազմակերպության (IDA) պայմաններին համապատասխան (0,75 տոկոսադրույք, մարման սկիզբը՝ տասը տարի անց, մարման ժամկետը՝ 40 տարի), ստանալ մինչև 38 500 000 (բառերով՝ երեսունութ միլիոն հինգ հարյուր հազար) գերմանական մարկ ընդհանուր գումարի վարկ, ինչպես նաև մինչև 1 500 000 (բառերով՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար) գերմանական մարկ գումարի ֆինանսական նպաստ, եթե ստորև բերվող յուրաքանչյուր նախագծի քննությամբ հավաստվել է, որ նախագիծը խրախուսման արժանի է.

մինչև 27 500 000 (բառերով՝ քսանյոթ միլիոն հինգ հարյուր հազար) գերմանական մարկ գումարի վարկ՝ հոսանքահաղորդիչ

համակարգի վերականգնման միջոցառումների նախագծի իրականացման նպատակով,

մինչև 6 000 000 (բառերով՝ վեց միլիոն) գերմանական մարկ գումարի վարկ՝ փոքր և միջին արտադրական մասնավոր ձեռնարկությունների խրախուսման նպատակով վարկային գծի տրամադրման նախագծի համար,

մինչև 5 000 000 (բառերով՝ հինգ միլիոն) գերմանական մարկ գումարի վարկ՝ համայնքային ենթակառույցների բարեփոխման նախագծի իրականացման նպատակով,

մինչև 1 500 000 (բառերով՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար) գերմանական մարկ գումարի ֆինանսական նպաստ՝ ուսումնասիրությունների և մասնագետների հիմնադրամ ստեղծելու նպատակով:

2) Եթե Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառա-վարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը հնարավո-րություն է ընձեռում հետագայում ևս Մայնի Ֆրանկֆուրտի Վերականգնման վարկերի բանկից (KfW) վարկեր կամ ֆինանսական նպաստներ ստանալ նախագծերի նախապատրաստման նպատակով կամ ֆինանսական այլ նպաստներ ստանալ նախագծերի իրականացման և խնամատարության նպատակով ձեռնարկվող հարակից միջոցառումների համար, ապա վերջիններիս նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը:

3) Նախապատրաստական և հարակից միջոցառումների իրակա-նացման համար 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն տրամադրվող ֆինանսական նպաստները փոխարկվում են վարկի, եթե չեն օգտագործվում վերոհիշյալ միջոցառումների իրականացման նպատակով:

4) 1-ին պարբերությունում նշված նախագծերը կարող են Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների փոխադարձ համաձայնությամբ փոխարինվել այլ նախագծերով:

Հոդված 2

1) 1-ին հոդվածում նշված գումարների կիրառությունը, վերջիններիս տրամադրման պայմանները, ինչպես նաև կապալատվության կարգը սահ-մանվում են Վերականգնման վարկերի բանկի (KfW) և վարկառուների, ինչպես նաև նպաստառուների միջև կնքվելիք պայմանագրերով, որոնք ենթարկվում են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող օրենսդրական նորմերին:

2) 1-ին հոդվածում գումարի տրամադրման վերաբերյալ համաձայնությունն անվավեր է համարվում, եթե տրամադրման տարուց սկսած՝ 8 տարվա ընթացքում վարկի տրամադրման, ինչպես նաև ֆինանսավորման մասին համապատասխան պայմանագրեր չեն կնքվում:

Վերոնշյալ գումարների համար ժամկետը լրանում է 2005 թվականի դեկտեմբերի 31-ին:

3) Այն դեպքերում, եթե վարկառուն Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէ, նա երաշխավորում է ի դեմս Վերականգնման վարկերի բանկի (KfW) բոլոր վճարումները գերմանական մարկով՝ ի կատարումն 1-ին պարբերության համաձայն կնքվելիք պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Վերականգնման վարկերի բանկին (KfW) ազատում է այն բոլոր հարկերից և պետական այլ տուրքերից, որոնք կապված են Հայաստանի Հանրապետությունում 2-րդ հոդվածում հիշատակված պայմանագրի կնքմանը և իրականացմանը:

Հոդված 4

Վարկերի, ինչպես նաև ֆինանսական նպաստի տրամադրումից բխող՝ ցամաքով, ջրով և օդով իրականացվող մարդկանց և ապրանքների փոխադրումների պարագայում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ուղևորներին և առաքողներին փոխադրող ձեռնարկությունների ընտրության ազատություն է ընձեռում, չի ձեռնարկում այնպիսի միջոցառումներ, որոնք բացառում կամ խոչընդոտում են իրենց նստավայրը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հաստատած փոխադրող ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը փոխադրումների իրականացմանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այդ ձեռնարկությունների մասնակցությունն արտոնող թույլտվություններ է տալիս:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ծանուցում է, որ

ավարտված է ուժի մեջ մտնելու համար սահմանված ներպետական ընթացակարգը: Հիմք է ընդունվում ծանուցման ստացման օրը:

Կատարված է Երևան քաղաքում 1998 թ. հուլիսի 27-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և գերմաներեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թ. հունիսի 28-ից: